լեզուին։ Դժբաղդաբար այս շրջանի յատուկ որ եւ է գրական բեկոր հասած չ'է մեզ։ Գուցէ իրաց այս վիճակն շարունակուեցաւ մինչ ծաւալումն քրիստոնէութեան 'ի Հայս, եւ Ագաթանգեղոս յոյն տառերով ու հայ բարբառով գրուած է նախ։

Այս շրջանին մէջ անշուշտ մուտ գտնել սկսած են ի մեզ յոյն բառեր, յոյն քերականի ձեւեր, եւ 'ի մի բան յունաբանութիւն։

Երկրագործութիւն եւ վաճառականութիւն՝ նախորդ շրջանի վիճակն ունէին։ Ցունական արհեստ ու գեղարուեստ մեծ ներգործութիւն մը ըրած չ'են կարծուիր այս ժամանակաշրջանին։

Ս. Բ.

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ԿՈՂ-ԿՈՂ-Ի-Մ ԵՒ ԿՈՂ-Ր ԲԱՌԵՐԸ

Մեր բառը կող-կող-ի-մ = guardare cogli occhi piangenti, strúggersi piangendo *կամ* sospirando, gémere; piángere amaramente, *եւ* supplicare piangendo, *կրկնաձեւ է հնդեւր.* «*kolâ» *արմատէն։ Այս* «*kolâ» = schlagen *արմատին կը պատկանին ըստ Հիրտ-ի* (Der indog. Ablaut, *Ստրասբ.* 1900, *էջ* 86, § 262)՝ *լիթ.* «kâlti» = schmieden, schlagen, *ռուս.* «kolóti» = stechen, abstechen, schlachten, *յուն.* σύκολος, δύσκολος = schwer zu hehandeln; *հին իր.* «clâr» = Tafel, Brett, *յուն.* κλᾶρος = Loos, Anteil, *լիթ.* «kúlti» = dreschen, *սանսկր.* «Rûtam» = Horn, Hammer, Schadel, *լատ.* «clâdes»; *յուն.* κλάσε = er brach ab, κλαστός = zerbrochen. *Նոյնպէս կը նշանակէ հնդեւր.* «*pelêk» = schlagen, weinen (*զարնել, լալ*) *ըստ Հիրտ-ի* (Ablaut, *էջ* 89, § 287)՝ *հին եկ. սլ.* «plakati» = weinen, *գոթ.* «fai-flôk-un» = beklagen, *լիթ.* «plóju, plóti» = schlagen, klatschen, *լիթ.* «plékiu» = schlage: *գոր. յուն.* πλάσσω = schlage, πλαγά = Schlag, *լատ.* «plâga», *լիթ.* «plakù, plàkti» = schlagen, *լատ.* «plango», *յուն.* πλάζω = schlage, verschlage.

Ըստ Հիրտ-ի (Ablaut, *էջ* 86. § 263)՝ *հնդեւր.* «kolâ» = Holz (*ծառ*) *ալ հնդեւր.* «'kolâ» = schlagen (*զարնել*) *արմատին կը պատկանի։ Ռուսերէն* «koloda» = Block, Klotz, *յուն.* κλών, κλωνός = Schössling, Zweig: *հին բարձր գերմ.* «holz», *յուն.* κλᾶρος = Loos; *յուն.* κλάδος = Zweig. *Այս հնդեւր.* «*kolâ» = «*ծառ*» *ձեւն ալ ունինք մեր լեզուին մէջ, ինչպէս՝ կող-ր* (*յոգն. կողեր-ք*) = «*ոստ, ճիւղ*» = ramo, *հնդեւր.* «-ro» *վերջաւորութեամբ։ հմմտ. նո-ր* = *հնդեւր.* «*névros» *կամ* «*nóvros», *լատ* «nov-us» *եւ այլն։*

Budapest. *ՂՈՒԿԱՍ ԲԱԴԴՐՈՒՊԱՆԵԱՆ*
Անեցի

digitised by A.R.A.R.@